զում անել նրա մտերիմ ընկերներն, այսոամենայնիւ, մտածում էի, թէ լաւ է նրանց հետ լինել, նրանց հետ գործել, — նրանք ազնիւ մարդիկ են: Այս պատճառով, երբ Ասլանը յայտնեց, թէ «մի գործի» համար միտք ունի Վան քաղաքը գնալ, ես աղաչեցի, որ ինձ էլ իր հետ տանէ: Նա ցօժարոեցաւ, ասաց, թէ դու եկել ես ծերունի որսորդի ընտանիքի հետ, պէտք չէ նրանց անտէր թողնել: — Մարօն մեզ մօտ էր, նա լսեց այս խօսքերը եւ իրան յատուկ արհամարհական ոճով պատասխանեց, թէ ես շատ հարկաւոր չեմ նրանց, թէ նրանք առանց ինձ էլ կարող են տուն վերադառնալ, թէ որսորդի ընտանիքին ոչ ոք չի համարձակոի մօտենալ: Ով որ չէր ճանաչում Մարօին, կարող էր վշտանալ այս խօսքերից, բայց ես գիտէի նրա սիրտը, թէ որքան բարի էր նա, այս պատճառով նրա խօսքերը շարժեցին իմ ժպիտը միայն:

Երեկոյ էր: Այս խօսակցութիւնն անց էր կենում մեր մէջ մի բլուրի վրայ, որ բաւականին հեռու էր վանքից. այնտեղ գնացել էինք Մարօի հետ «Տիրամօր ծաղիկներ» քաղելու, ուր եւ հանդիպեցանք Ասլանին: Նա դարձեալ կերպարանափոխ էր եղած: Այժմ նմանում էր մի վանեցի վաճառականի:

Մարօն եւս իր կողմից խնդրեց Ասլանից, որ ինձ վեր առնէ իր հետ, ասելով, թէ ես ամենեւին քաղաք չէի տեսել, հարկաւոր էր ինձ քաղաք տեսնել, եւ մենք երկուսս էլ երկար թախանձելուց յետոյ, վերջապէս նրան ընդունել տոինք:

— Ես դուրս եմ գալու հէնց այսօր, արեւը մտնելէն յետոյ, — ասաց նա. — մնում է մէկ ու կէս ժամ:

Ես խնդրեցի մի փոքր սպասել, մինչեւ ես գնամ մօրս եւ քոյրերիս հետ տեսնեմ:

— Սպասել կարող չեմ, — ասաց նա, — վաղը չէ միւս օրը առաւօտեան ես պէտք է Վանում գտնեմ:

— Ուրեմն, դու գիշերները չի՞ պիտի հանգստանաս, որ կարողանաս հասնել, — հարցրուց Մարօն:

— Ոչ, — պատասխանեց նա, — որովհետեւ երեք օրոայ ճանապարհ է:

— Ուրեմն ես չի՞ պիտի կարողանամ տեսնել մօրս:

Նա մօտեցաւ ինձ եւ հազիւ լսելի ձայնով ասաց.

— Ով որ կամենում է մեր ետեւից գալ, պէտք է թողնէ իր մօրը, հօրը, քոյրերին եւ եղբայրներին: Հասկացա՞ր:

Այնուհետեւ Ասլանը յայտնեց, թէեւ ընդունում է ինձ իր հետ Վան տանել, բայց չէ կարող միասին դուրս գալ, այլ կսպասէ ինձ առաջին իջեւանում,